Հաստատված է տնօրինական խորհրդի
24.04.21 նիստում
նախագահ՝ Ա. Ղուլիջօղլյան
քարտուղար՝ Հ. Մողրովյան

Արթիկի պետական քոլեջի ուսանողների
տեղափոխության, վերականգնման և հեռացման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդհանուր դրույթներ

1. Ուսանողի տեղափոխությունը մեկ այլ ուսումնական հաստատություն, ուսուց - ման մի ձևից մյուսին,ինչպես նաև նախկին ուսանողի վերականգնումը թույ - լատրվում է ուսուցման առաջին տարվա երկրորդ կիսամյակից և հաջորդ տարիներին, կատարվում է մինչև ուսումնական տարվա կամ կիսամյակի սկիզբը, բացառությամբ տարկետման մեջ գտնվող ուսանողների:

   Առանձնահատուկ դեպքերում ուսանողի տեղափոխումը կամ վերականգնումը վերադաս մարմնի թույլտվությամբ, կարող է իրականացվել ուսուցման առաջին տարվա կամ ուսումնական տարվա ընթացքում:

2. Չհավատարմագրված պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսանողների տեղափոխությունը Արթիկի պետական քոլեջ արգելվում է :

3. Ըստ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի տարբերությունների հանձնումը կատարվում է տեղափոխությունից կամ վերականգնումից հետո տնօրենի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

Ուսանողների տեղափոխությունները

4. Ուսանողների տեղափոխությունները մեկ այլ ուսումնական հաստատություն կատարվում է երկու ուսումնական հաստատությունների տնօրենների համա - ձայնությամբ համաձայն սույն կարգի:

   Քոլեջի ներսում ուսանողի տեղափոխությունը ուսուցման մի ձևից մյուսը իրագործվում է տնօրենի հրամանով համապատասխան հիմքերի առկայության դեպքում:

5. Այլ ուսումնական հաստատություն տեղափոխվել ցանկացող ուսանողն այդ մասին դիմում է ներկայացնում քոլեջի տնօրենին և ստանալով տնօրենի գրավոր համաձայնությունը, դիմում է այն ուսումնական հաստատության տնօրենին, ուր ցանկանում է տեղափոխվել:

   Վերջինս համաձայնության դեպքում, ուսանողի անձնական գործերը ստանալու նպատակով հարցում է կատարում քոլեջի տնօրենին, որն էլ հարցումը ստանալուց հետո հրաման է արձակում տեղափոխվող ուսանողի հեռացման մասին: Երեք օրվա ընթացքում ուսանողի անձնական գործերին կից ակադեմիական տեղե -

կանքով, ուղարկվում է ուսանողին ընդունող հաստատության հասցեով՝ իր մոտ թողնելով ակադեմիական տեղեկանքի, ուսումնական քարտի, կրթության մասին վկայականի և ուղարկվող փաստաթղթերի պատճենները:

Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը, ստավալով ուսանողի անձնական գործն անհրաժեշտ փաստաթղթերով, հրամանագրում է այդ ուսանողին որպես տվյալ ուսումնական հաստատության ուսանող:

Այն դեպքում, երբ անձնական գործն ուղարկման ենթակա չէ, հրամանագրումը կատարվում է նախկին ուսումնական հաստատության տնօրենի կողմից ստորագրված և կնքված ակադեմիական տեղեկանքը ստանալուց հետո:

6. Եթե ուսանողը անհատական պայմանագիր է կնքել հիմնարկության, ձեռնարկության, կազմակերպության հետ քոլեջում սովորելու համար, ապա նրա տեղափոխությունը այլ ուսումնական հաստատություն պետք է նախորդի նշված պայմանագրի փոփոխմանը և լուծարմանը:

Ուսանողի վերականգնումը

7. Քոլեջից նախկինում հեռացված ուսանողը կարող է վերականգնվել ուսուցման բոլոր ձևերում՝ իր դիմումի և քոլեջի տնօրենի հրամանի հիման վրա՝ տվյալ մասնագիտության գծով: Այն դեպքում, երբ մասնագիտությունը, որի գծով նախկինում սովորել է ուսանողը, քոլեջում այլևս չի գործում, վերականգնվող ուսանողին առաջարկվում է տեղափոխվել այլ ուսումնական հաստատություն ուսումն իր նախկին մասնագիտությամբ շարունակելու համար:

Անհարգելի պատճառով հեռացված անվճար ուսուցման համակարգում սովո - րած ուսանողի վերականգնումը կատարվում է վճարովի ուսուցման համակարգում: Վերականգնված ուսանողին վարձաչափ է սահմանվում տվյալ ուսումնական տարում քոլեջում սահմանված վարձաչափը:

8. Հեռացված ուսանողները վերականգնվում են այն ուսումնական կիսամյակից, որից հեռացված են եղել:

9. Վերականգնված ուսանողի անձնական գործին կցվում է քաղվածք վերա - կանգնման մասին, ուսանողի դիմումը և ակադեմիական տեղեկանքը:

Ուսանողի հեռացումը

10. Ուսանողը կարող է հեռացվել քոլեջից

ա/ իր դիմումի համաձայն

բ/ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու կապակցությամբ

գ/ անբավարար առաջադիմության պատճառով

դ/ ուսումնական կարգապահությունը և ուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը խախտելու պատճառով

ե/ իրավապահ մարմինների ներկայացմամբ

զ/ ուսման վարձը չմուծելու պատճառով

Ուսանողի հեռացումը կատարվում է քոլեջի տնօրինական խորհրդի որոշման հիման վրա տնօրենի կողմից արձակված հրամանով:

11. Քոլեջից հեռացված ուսանողի դիմումի հիման վրա նրան տրվում է տեղեկանք քոլեջում ուսանած ժամանակահատվածի մասին, ակադեմիական տեղեկանք և կրթության մասին վկայականի բնագիրը, որոնց պատճենները, հաստատված քոլեջի կողմից, պահվում է ուսանողի անձնական գործում:

Ուսանողին ակադեմիական արձակուրդ տալը

12. Ուսանողին ակադեմիական արձակուրդ տալու համար հիմք կարող է հանդիսանալ հաճախակի և երկարատև հիվանդությունները, հղիությունն ու ծննդաբերությունը:

13. Ուսանողին ակադեմիական արձակուրդ տալու հարցը որոշում է քոլեջի տնօրենը բժշկա - խորհրդատվական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, իսկ դրա բացակայության դեպքում բուժհիմնարկի գլխավոր բժշկի ստորագրած և կնիքված տեղեկանքի հիման վրա:

Տեղեկանքում պետք է մատնանշված լինի ակադեմիական արձակուրդ տալու անհրաժեշտության փաստը:

14. Առաջին կուրսի ուսանողին ակադեմիական արձակուրդ տալու հարցը քննարկվում է տնօրինական խորհրդի նիստում խիստ անհատական կարգով:

Պարտադիր զինվորական ծառայության մեկնող ուսանողներին տարկետում տրամադրելն ու վերականգնումը

15. Պարտադիր զինվորական ծառայության մեկնող ուսանողներին տրվում է տարկետում զինկոմիսարիատի կողմից տրված համապատասխան տեղեկանքի հիման վրա քոլեջի տնօրենի հրամանով:

16. Պարտադիր զինվորական ծառայության մեկնած ուսանողի տեղը թափուր չի համարվում մինչև ուսանողի ծառայության ավարտը:

17. Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած ուսանողը պարտավոր է քոլեջ ներկայացնել համապատասխան զինկոմիսարիատում հաշվառման

կանգնելուց հետո 10 օրվա ընթացքում: Ուսանողը համապատասխան փաս - տաթղթեր ներկայացնելու դեպքում վերականգնվում է ուսուցման նույն համա - կարգում և, հնարավորության սահմաններում, ուսումնառության այն ժամանա - կաշրջանում, որից նա զորակոչվել է, ընդ որում, նրան տրվում է քոլեջում գործող ուսուցման ձևի ընտրության իրավունք:

Ժամկետից ուշ / մինչև երկու ամիս / զորացրված ուսանողի համար քոլեջը պարտավոր է ստեղծել համապատասխան պայմաններ ուսանողի ուսումնա - ռությունն առանց ընդհատման շարունակելու համար:

Ավելի ուշ զորացրված ուսանողի վերականգնումը իրագործվում է այն կիսամյակից, որից նա զորակոչվել է:

18. Զինվորական ծառայությունից վերադարձած վճարովի համակարգի ուսանողին վարձաչափ է սահմանվում զորակոչի տարում սահմանված վարձաչափը: Հետագայում քոլեջում սահմանված վարձավճարի փոփոխման հետ կապված փոփոխման կենթարկվի նաև նրա վարձաչափը: